



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 օգոստոսի 2026 թվականի N 1150-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԶՈՀՎԱԾ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 2/77
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՎՏՈՏՆԱԿԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի պահանջներով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ և 5-րդ կետերով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021 թ-ի N 233-Ն որոշումներով, «Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումը պետական կամ համայնքային հողամասերում գտնվող ինքնակամ կառույցների նկատմամբ պետության կամ համայնքների սեփականության իրավունքի պետական գրանցման կարգը հաստատելու մասին» 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշումներով, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Թաթուլ Աշոտի Զանոյանի /որակավորման վկայականի համար 0310՝ տրված 05.12.2013թ./ կողմից 25.07.2023թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2023ZBNV4H ծածկագիրը, ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Հրայր Ազնիվի Դանոյանի դիմումը՝ Գավառ քաղաք Ձոհված Ազատամարտիկների փողոց թիվ 2/77 հասցեում իր կողմից ինքնակամ կառուցված 38.10 քմ. արտաքին /35.10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով

սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ և կառույցը պահպանելը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը. **որոշում եմ**

1. Գավառ քաղաք Զոհված Ազատամարտիկների փողոց թիվ 2/77 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00381 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության՝ բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 38.10քմ. արտաքին /35.10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը համարել համայնքային սեփականություն՝ համաձայն կից ներկայացվող հողամասի և շինությունների հատակագծերի:

2. Գավառ քաղաք Զոհված Ազատամարտիկների փողոց թիվ 2/77 հասցեում գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող 0.00381 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հողամասի վրա ինքնակամ կառուցված 38.10 քմ. արտաքին /35.10 քմ. ներքին / մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական:

3. Հողամասի գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխել բնակելի կառուցապատման հողատեսքի:

4. Օրինական ճանաչված ավտոտնակին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Զոհված Ազատամարտիկների փողոց թիվ 2/77 ավտոտնակ հասցեն:

5. Օրինականացված 38.10 քմ. արտաքին /35.10 քմ. ներքին/ մակերեսով ավտոտնակը՝ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառքի միջոցով/ տրամադրելու մասին գրավոր առաջարկություն անել ինքնակամ կառույցն իրականացրած անձ՝ Հրայր Ազնիվի Դռնոյանին:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**



ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 օգոստոսի 2026 թվականի N 1151-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ, Ք. ԳԱՎԱՌ Ա. ՂԱՄԱՐՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 48 ՀԱՍՑԵԻ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ
ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԺԱՆԵՏԱ ՍԵՐՅՈԺՅԱՅԻ ՄԱՋՄԱՆՅԱՆԻ, ԱՐԹՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆԻ, ԱՍՏԴԻԿ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 14.08.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 13.08.2026թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ՝ Ժանետա Սերյոժայի Մազմանյանի /ծնված 18.04.1953թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ համայնք ք. Գավառ Ա. Ղամարյան փողոց թիվ 48 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.07040 հա, որը Ժանետա Սերյոժայի Մազմանյանի /ծնված 18.04.1953թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ 0.07040 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Ա. Ղամարյան փողոց թիվ 48 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ժանետա Սերյոժայի Մազմանյանի /ծնված

18.04.1953թ-ին /, Արթուր Հակոբյանի /ծնված 08.09.1985թ-ին/, Աստղիկ Վոլոդյայի Հակոբյանի /ծնված 09.12.1986թ-ին/, հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.06 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.0104 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.07040 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 1984թ-ին ինքնակամ կառուցված 220.9 քմ մակերեսով անավարտ շինությունը և պարիսպը ճանաչել որպես ինքնակամ շինություն:

3. Հողամասին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ա. Ղամարյան փողոց թիվ 48 բնակելի տուն հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2026թ. օգոստոսի 24
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 1152-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ
ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՖԱՐԻՆԱ ՎԱԶԱԳԱՆԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 11.08.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 21.07.2026թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ՝ Ֆարինա Վաչագանի Կարապետյանի /ծնված 01.07.1947թ-ին/ լիազորված անձ՝ Կարինե Զարգանդի Պետրոսյանի դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.07222 հա, որը Ֆարինա Վաչագանի Կարապետյանի /ծնված 01.07.1947թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 418.0 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1990-2003թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.07222 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց թիվ 3 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Ֆարինա Վաչագանի Կարապետյանի /ծնված 01.07.1947թ-ին /, հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.06 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.01222 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.07222 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 382.60 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1990-1997թթ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. 2003թ ինքնական կառուցված 35.40 քմ մակերեսով շինությունը ճանաչել որպես ինքնական շինություն:

3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց թիվ 3 բնակելի տուն հասցեն:

4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2026թ. օգոստոսի 25
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 1153-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ՍԱՐՈՒԽԱՆ Գ. ԴԱՐԲԻՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 26
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԵԼԻ
ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ՝
ԱՐԱՐԱՏ ՄԱՔՍԻՄԻ ՉԻՉՈՅԱՆԻՆ, ՍՈՒՍԱՆՆԱ ՖԵԼԻՔՍԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ,
ԱՎԵՏԻՔ ԱՐԱՐԱՏԻ ՉԻՉՈՅԱՆԻՆ, ՄԱՐԻ ԱՐԱՐԱՏԻ ՉԻՉՈՅԱՆԻՆ ՀԱՄԱՏԵՂ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՍ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության 05 հունվարի 2022թ-ի N 13-Ն որոշման հաստատված կարգի և հիմք ընդունելով որակավորում ունեցող անձ Արամ Վրույրի Առաքելյանի /որակավորման վկայականի համար 0419՝ տրված 26.08.2021թ./ կողմից 29.03.2026թ-ին տրված ինքնակամ շինությունները հաշվառված լինելու վերաբերյալ չափագրման տվյալների մուտքագրման 2026ET38N8 ծածկագիրը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, ինքնակամ շինարարական աշխատանքներ իրականացրած անձ՝ Գավառ համայնքի գյուղ Սարուխան Գ. Դարբինայն փողոց թիվ 26 հասցեի համասեփականատեր /սեփ. վկայական N09022023-05-0082/ Արարատ Մաքսիմի Չիչոյանի /ծնված 10.07.1962թ./ Գավառ համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը և նկատի ունենալով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, ինչպես նաև 0.128 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, շինությունները կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի գյուղ Սարուխան Գ. Դարբինյան փողոց թիվ 26 հասցեում գտնվող, 2009թ-ին ինքնական կառուցված 41.50 քմ արտաքին /36.30 քմ ներքին/ մակերեսով բնակելի տունը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը $41.50 \times 1028 = 42700$ /քառասուներկու հազար յոթ հարյուր/ ՀՀ դրամ, 62.2 քմ արտաքին /52.90 քմ ներքին/ մակերեսով ավտոտնակը, 25.10 քմ մակերեսով պարիսպը՝ 1/մեկ/ քառակուսի մետրի համար 616.8 /վեց հարյուր տասնվեց ամբողջ ութ տասնորդական/ ՀՀ դրամ, ընդամենը $87.30 \times 616.8 = 7500$ /հիսուներեք հազար ինը հարյուր/ ՀՀ դրամ և թվով 8 ինքնական բացված և փակված դռների և պատուհանների յուրաքանչյուր 1 պատուհանի համար 1028 /մեկ հազար քսանութ/ ՀՀ դրամ, ընդամենը $8 \times 1028 = 8300$ /ութ հազար երեք հարյուր/ ՀՀ դրամ սահմանված վճարներով ճանաչել օրինական:

2. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**



ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2026թ. օգոստոսի 25
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 1154-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ 15-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 47 ՀՈՂԱՄԱՍ
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵԽԱԿ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ,
ԿԱՐԻՆԵ ԱԼԵՔՍԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԵԽԱԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ,
ՄԱՆՈՒԿ ՄԵԽԱԿԻ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 30.07.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 05.11.1991թ. թիվ 270 որոշումից քաղվածքը, ք. Գավառ Ազատության 15-րդ փողոց թիվ 47 հողամաս հասցեի գույքի համասեփականատեր՝ Մանուկ Մեխակի Մանուկյանի /ծնված 01.06.1985թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը, համաձայն որի Գավառ համայնք ք. Գավառ Ազատության 15-րդ փողոց թիվ 47 հողամաս հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.06676 հա, որը Մանուկ Մեխակի Մանուկյանի /ծնված 01.06.1985թ-ին / ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ 0.06676 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Ազատության 15-րդ փողոց թիվ 47 հողամաս հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մեխակ Հովհաննեսի Մանուկյանի /ծնված 26.07.1960թ-ին/, Կարինե Ալեքսանի Ավետիսյանի /ծնված 29.11.1960թ-ին/, Հովհաննես Մեխակի Մանուկյանի /ծնված 29.06.1984թ-ին/, Մանուկ Մեխակի Մանուկյանի /ծնված 01.06.1985թ-ին/, հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.06 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00676 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 0.06676 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:

2. Հողամասին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Ազատության 15-րդ փողոց թիվ 47 հողամաս հասցեն:

3. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

4. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**



ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ

2026թ. օգոստոսի 25
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 1155-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 17 ՄԱՅԻՍԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1244-Ա ՈՐՈՇՈՒՄ
ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԳՅՈՒՂ ԼՃԱՓ 3-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 6/1
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՅՈՒՍՆՈՑԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ
ՆԿԱՏՄԱՄԲ ՀՐԱՆԴԻԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀՅՈՒՍՆՈՑԻ ՈՒ
ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ԵՎ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24) ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 02.02.2002թ. «Հայաստանի Հանրապետությունում շենքերի, շինությունների կամ դրանց մի հատվածի գործառնական նշանակությունը փոխելու կարգը հաստատելու մասին» թիվ 88 որոշման, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ կետով, ՀՀ վարչապետի 2009 թ-ի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի ՀՀ Գեղարքունիքի մարզի Գեղարքունիք-2 միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի նախագծի վերաբերյալ գլխավոր հատակագծի հաստատման N 2-5 դրական եզրակացության, Գավառ համայնքի ավագանու 11 մարտի 2024 թ-ի թիվ 3 նիստի թիվ 97-Ա որոշման հիմք ընդունելով Լճափի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 26.01.1992թ. թիվ 2 արձանագրությունից քաղվածքը, ակտը և վճարման անդորրագիրը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 01.11.2006թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ Հրանդիկ Համբարձումի Պետրոսյանի /ծնված 09.06.1959թ-ին/ դիմումը, ինչպես նաև նկատի ունենալով, որ սպասարկման համար հատկացված 0.03508 հա մակերեսով հողատարածքը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում են**

1. Ուժը կորցրած ճանաչել Գավառի համայնքի ղեկավարի 2024 թվականի մայիսի 17-ի թիվ 1244-Ա որոշումը:

2. Վերականգնել Գավառ համայնք գյուղ Լճափ 3-րդ փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Հրանդիկ Համբարձումի Պետրոսյանի /ծնված 09.06.1959թ-ին/ հողօգտագործման իրավունքը, հյուսնոցի կառուցման և սպասարկման համար հատկացված հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.03508 հա ընդհանուր մակերեսով հողամասի նկատմամբ՝ որպես օրինական տիրապետող գույք՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 04.10.2005թ. ընդունված ՀՕ-199-Ն ՀՀ օրենքի հողամասը սեփականության իրավունքով անհատույց ձեռք բերելուց հետո հողամասի կամ դրա մասի առուվաճառքի, նվիրատվության, փոխանակման կամ իրավաբանական անձանց լուծարումից հետո նրա հիմնադիրներին (մասնակիցներին) հանձնման, այդ թվում՝ պարտատերերի պահանջների բավարարման կամ բռնագանձման հետևանքով հողամասի իրացման (այդ թվում՝ գրավառուի կողմից բռնագանձման հետևանքով հողամասը գրավատուից ձեռքբերման) դեպքում՝ անկախ այն հանգամանքից, թե հողամասը ձեռք է բերվել հատուցմամբ կամ անհատույց, ձեռք բերողը պետական կամ համայնքային բյուջե պետք է վճարի հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը/:

3. Գավառ համայնք գյուղ Լճափ 3-րդ փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հյուսնոցի սպասարկման համար հատկացված 0.03508 հա ընդհանուր մակերեսով հողատարածքի նպատակային նշանակությունը համապատասխանեցնել Գավառ համայնքի Գեղարքունիք-2 միկրոռեգիոնալ Լճափ բնակավայրի գլխավոր հենակետային հատակագծին՝ որպես բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման, գործառնական նշանակության հողատեսքի՝ պայմանով Գավառի համայնքապետարանի 900175101345 հաշվեհամարին 0.03508 հա հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքի վճարման անդորրագիր ներկայացնելու՝ $350.8 \times 514.8 = 180600$ /մեկ հարյուր ութսուն հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ դեպքում:

4. Գավառ համայնք գյուղ Լճափ 3-րդ փողոց թիվ 6/1 հասցեում գտնվող հյուսնոցի նպատակային նշանակությունը արտադրական նշանակությունից փոխել բնակելի նպատակային նշանակության, իսկ գործառնական նշանակությունը հյուսնոցից փոխել տնտեսական շինության:

5. Շենք շինությունները չեն հակասում քաղաքաշինական նորմերին և դրանց մակերեսները որոշվում են քարտեզագրման, գեոդեզիայի, չափագրման /հաշվառման/ և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող կազմակերպությունների /անձի/ կողմից տրված հատակագծերին համապատասխան:

6. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:

7. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

**ԳԱՎԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

2026թ. օգոստոսի 25
ք. Գավառ



ԳՐԻԳՈՐ ԴԱՇՏՈՅԱՆ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 օգոստոսի 2026 թվականի N 1156-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ ՀԱՅԱՌԱՏ ԹԱՂԱՄԱՍԻ Ա. ԲՈՒՌՆԱԶՅԱՆ 2-ՐԴ
ՓՈՂՈՑ ԹԻՎ 71/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ
ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՍԲ
ՍԱՄՎԵԼ ՍԵՐԳՈՅԻ ՂԱՆԴԻԼՅԱՆԻ, ԿԱՐԻՆԵ ՀՐԱԶԻԿԻ ԽԱԶԱՏՐՅԱՆԻ, ԴԱՎԻԹ
ՍԱՄՎԵԼԻ ՂԱՆԴԻԼՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ
ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներքնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 29.06.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց թիվ 71/1 հասցեի գույքի համասեփականատեր՝ Սամվել Սերգոյի Ղանդիլյանի /ծնված 25.09.1966թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց թիվ 71/1 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.25 հա, ինչը փաստացի կազմում է 0.25808 հա, որը Սամվել Սերգոյի Ղանդիլյանի /ծնված 25.09.1966թ-ին / ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 251.80 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1995-2020թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.25808 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց թիվ 71/1 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Սամվել Սերգոյի Ղանդիլյանի /ծնված 25.09.1966թ-ին/, Կարինե Հրաչիկի Խաչատրյանի /ծնված 20.01.1965թ-ին/, Դավիթ Սամվելի Ղանդիլյանի /ծնված 10.02.1989թ-ին/, հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.25 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.00808 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.25808 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 101.60 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1995թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. 2002-2020թթ. ինքնական կառուցված 150.20 քմ մակերեսով շինությունները ճանաչել որպես ինքնական շինություն:
3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Հացառատ թաղամասի Ա. Բուռնազյան 2-րդ փողոց թիվ 71/1 բնակելի տուն հասցեն:
4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 25
ք. Գավառ





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1157-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ ԳՅՈՒՂ ՆՈՐԱՏՈՒՄ ՍԵՎԱՆԻ ՓՈՂՈՑ 99 ՀԱՍՑԵՈՒՄ ԳԱՐԻԿ
ԺՈՐԱՅԻ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԵՎ ԷՎԵԼԻՆԱ ՄԱՆՎԵԼԻ ՆԱԴԱՐՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԶԱՓԵՐԸ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԸ ՃՇՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԹԻՎ 2 ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ
ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ
ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՀՈՒԼԻՍԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 1040-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի
34-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24)
կետի և ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման
վարույթը կասեցնելու մասին 14.08.2026թ N Կ-14082026-05-0105 որոշումը, Գավառ
համայնքի ղեկավարի 28 հուլիսի 2026 թվականի N 1040-Ա որոշումը, **որոշում եմ**

1. Գավառ համայնքի ղեկավարի ղեկավարի 28 հուլիսի 2026 թվականի N 1040-Ա
որոշման 2-րդ կետում /224.9 քմ. ներքին/ բառերի փոխարեն կարդալ՝ /284.6 քմ.
ներքին/ բառերը:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք. Գավառ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1158-Ա

ԱՐԱՄԱՅԻՍ ԴԱՐՄՈՅԻ ՏՈՆՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԱՏՐՈՆԱԺ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ
ՆՐԱ ՈՐԴՈՒՆ ՊԱՏՐՈՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 23-րդ հոդվածի, Հայաստանի
Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 43-րդ հոդվածի, «Տեղական
ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի
1-ին մասի 24/ կետի, «Խնամակալության և հոգաբարձության մարմինների
կանոնադրությունը հաստատելու մասին» ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի
N 631-Ն որոշմամբ հաստատված կանոնադրության դրույթներով, հիմք ընդունելով
Գավառի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության
հանձնաժողովի 17.08.2026թ. նիստի արձանագրությունը, **որոշում եմ**

1. Չափահաս վատառողջ քաղաքացի Արամայիս Դարմոյի Տոնոյանի (անձնագիր՝ AX
0323675, տրված՝ 25.06.2024թ. 040-ից) իրավունքների ու շահերի պաշտպանության
ապահովման նպատակով նրա նկատմամբ սահմանել պատրոնաժ :

2. Վատառողջ չափահաս քաղաքացի Արամայիս Դարմոյի Տոնոյանի պատրոն
/օգնական/ նշանակել նրա որդուն՝ Գագիկ Արամայիսի Տոնոյանին (անձնագիր՝
AL 0264524, տրված՝ 29.05.2023թ., 040-ից) :

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրը:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ


26 օգոստոսի 2026 թվականի N 1159-Ա

**ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔ Ք. ԳԱՎԱՌ Գ. ՊԵՏՐՈՎԻ ՓՈՂՈՑ 1-ԻՆ ՆՐԲԱՆՑՔ ԹԻՎ 17
ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ՄՆԱՑԱԿԱՆ ՍԱՐԳՍԻ ՀՈՎԱԿԻՄՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» 10.06.2008թ. ՀՀ ՀՕ-117-Ն օրենքով, Տեղական Ինքնակառավարման Մասին ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 24) կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի և ՀՀ Կառավարության 29.12.2005թ. «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» թիվ 2387-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ կառավարության 25.02.2021թ-ի N 233-Ն պահանջներով, հիմք ընդունելով 16.07.2026թ. տրված Գավառի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման հանձնաժողովի 07.04.1991թ. թիվ 19 որոշումից քաղվածքը, ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով /տրված 13.01.2026թ-ին/ գույքի նկատմամբ ժառանգ՝ Մնացական Սարգսի Հովակիմյանի /ծնված 07.11.1962թ-ին/ դիմումը, «Դավիթ Առաքելյան» ԱԶ-ի կողմից տրված հողամասի ու շենք-շինությունների հատակագծերը, համաձայն որոնց ք. Գավառ Գ. Պետրովի փողոց 1-ին նրբանցք թիվ 17 հասցեում գտնվող հողամասը չափագրվել է, հատկացվել է 0.06 հա, ինչը փաստացի կազմում է 0.07187 հա, որը Մնացական Սարգսի Հովակիմյանի /ծնված 07.11.1962թ-ին / ժառանգության իրավունքով պատկանող հողամասն է և հաշվի առնելով, որ օրինական և ինքնակամ կառուցված 212.60 քմ ընդհանուր մակերեսով շենք-շինությունների /կառուցված 1988-2021թթ./ կառուցման ու սպասարկման համար անհրաժեշտ 0.07187 հա հողամասը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների ցանկում, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի առաջացնում սերվիտուտ, **որոշում եմ**

1. Վերականգնել Գավառ համայնք ք. Գավառ Գ. Պետրովի փողոց 1-ին նրբանցք թիվ 17 հասցեում գտնվող գույքային միավորի նկատմամբ Մնացական Սարգսի Հովակիմյանի /ծնված 07.11.1962թ-ին / հողօգտագործման իրավունքը, բնակելի տան կառուցման և սպասարկման համար 0.06 հա օրինական հատկացված հողամասից ավել փաստացի օգտագործվող 0.01187 հա հողամասի գույքային իրավունքները՝ ճանաչելով նրա սեփականության իրավունքը 0.07187 հա ընդհանուր մակերեսով հողամասի և օրինական կառուցված 204.50 քմ ընդհանուր մակերեսով շինությունների /կառուցված 1988թ./ նկատմամբ՝ որպես օրինական տիրապետվող գույք:
2. 2021թ. ինքնական կառուցված 8.10 քմ մակերեսով պարիսպը ճանաչել որպես ինքնական շինություն:
3. Անշարժ գույքին տրամադրել Գավառ համայնք, ք. Գավառ Գ. Պետրովի փողոց 1-ին նրբանցք թիվ 17 բնակելի տուն հասցեն:
4. Սույն որոշումը ներկայացնել ՀՀ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանում՝ գույքային իրավունքների պետական գրանցում կատարելու համար:
5. Որոշման կատարման հսկողությունը դնել Գավառ համայնքի ղեկավարի տեղակալ Գ. Բոշյանի վրա:

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Գ. ԲՈՇՅԱՆ



2026թ. օգոստոսի 26
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1160-Ա

ՄՆՈՒՆԴԻ ՓԱԹԵԹ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության» մասին ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները և Գավառի համայնքապետարանի սոցիալական աջակցության տրամադրման ենթահանձնաժողովի 26.08.2026թ. եզրակացությունը, **որոշում եմ**

Գավառի համայնքապետարանի 2026 թ. բյուջեով նախատեսված 10 բաժնի 7 խմբի 1 դասի այլ սոցիալական ծրագրեր գործառնական դասակարգման 4729 տնտեսագիտական հոդվածով Գավառ համայնքի ներքոնշյալ բնակիչներին տրամադրել 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ դրամական արժողությամբ սնունդի փաթեթ.

1. Մաջարյան Աղավնիկ Հովհաննեսի 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ
2. Սեդրակյան Մարիամ Սեդրակի 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ
3. Գափոյան Արփինե Լևոնի 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ
4. Սարգսյան Արմինե Մելսակի 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ
5. Հարությունյան Սոֆիկ Սարիբեկի 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ
6. Արամայիսյան Լաուրա Արամի 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ
7. Մարգարյան Սիլվա Ստեփանի 19980 /տասնինը հազար ինը հարյուր ութսուն / ՀՀ դրամ

Ընդամենը՝ 139 860 /մեկ հարյուր երեսունինը հազար ութ հարյուր վաթսուն/ ՀՀ դրամ

ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Գ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

2026թ. օգոստոսի 26
ք. Գավառ



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնք
ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, (0264)23423 info@gavarihamaynqapetaran.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 օգոստոսի 2026 թվականի N 1161-Ա

**«ԳԱՎԱՌԻ ԳՐԻՇԱ ՎԱՀԱՆԻ ԱՓՐՈՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-ԻՆ
ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 1 հոդվածի 2-րդ մասի և 23 հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10 հոդվածի 11-րդ մասի և «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով Գավառ համայնքի ավագանու 20.01.2026թ. արտահերթ նիստի թիվ 4 -Ն որոշման պահանջները և Գավառի համայնքապետարանի սոցիալական աջակցության տրամադրման ենթահանձնաժողովի 27.08.2026թ. եզրակացությունը, **որոշում եմ**

